## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
## «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

10.06.2021թ.
ժամը 14⁰⁰

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**

- ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ՏԱ վարչության պետ, փոխգնդապետ Կ. Գրիգորյան,

**Գնահատողներ՝**

- ՀՀ ԶՈՒ ԳՇ Ռ Ծ երկրատեղեկատվական և օդերևութաբանական ապահովման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Ռ. Մարգարյան,
- ՀՀ ԶՈՒ ԳՇ Ռ Ծ տեղագրաերկրաբաշխական, նավարկային և պլանավորման բաժանմունքի սպա, փոխգնդապետ Գ. Հովսեփյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ՏԱ վարչության ապահովման 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Միքայելյան:

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության ԳԿՎ ԳԿ 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ. Աղոնց:

**«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

(Մ.Աղոնց)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Մ.Աղոնց)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար ռազմական հատուկ մասնագիտական տեխնիկայի սարքերի սպասարկման և նորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Մոնտալ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

(Մ.Աղոնց)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- **«Մոնտալ» ՍՊԸ-ն**, որի ներկայացված հայտի Հավելված 1-ում բացակայում է հավաստումը թե մասնակիցը ոչ երկրի ռեզիդենտ է հանդիսանում: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 10.06.2021թ. գնահատող հանձնաժողովը

կասեցրել է հայտերի փաստաթղթերի ամփոփման նիստը և մասնակցին ծանուցել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում «**Մոնտալ**» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

(Մ.Աղոնց)

3.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ դրամ

| Չ/Բ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվ. գումարը | 1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | Հ/Հ | անվանումներ | Գումար | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Ռազմական հատուկ մասնագիտական տեխնիկայի սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ / Շարժական համալիրների սպասարկման և վերանորոգման ծառայություններ | դրամ | 1 | 3000000 | «Մոնտալ» ՍՊԸ | 3000000 | | 1 | «Մոնտալ» ՍՊԸ | 3000000 | |
| 2 | Ռազմական հատուկ մասնագիտական տեխնիկայի սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ / Գեոդեզիական սարքերի սպասարկման և վերանորոգման ծառայություններ | դրամ | 1 | 2000000 | «Մոնտալ» ՍՊԸ | 2000000 | | 1 | «Մոնտալ» ՍՊԸ | 2000000 | |
| 3 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | դրամ | 1 | 2000000 | «Մոնտալ» ՍՊԸ | 2000000 | | 1 | «Մոնտալ» ՍՊԸ | 2000000 | |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/ ճիշտ է և համապատասխանում է հրավերի պայմաններին:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի (1. 2. 3)-րդ չափաբաժինների մասով համապատասխան հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները, որոշեց գների նվազեցման նպատակով 18.06.2021թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան. Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Բանակցություններին չի ներկայացել են «Մոնտալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, ուստի մասնակցի գնային առաջարկը մնաց անփոփոխ:

Արդյունքում «ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված և ընտրված մասնակցի հետ կնքվելիք պայմանագրով սահմանված ընտրված մասնակցի կողմից գնային առաջարկով միավորի գների հանրագումարի տեսքով առաջարկված գինը՝ **Մ.Գ 1-ին չափաբաժնի մասով** կկազմի **3 000 000 ՀՀ** դրամ, պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ծառայության և պահեստամասերի համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ **Ն.Գ. 1-ին չափաբաժնի մասով** հավասար է **6 864 000** ՀՀ դրամ: Ուստի «ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծում ներառված **բանաձևի Մ.Գ./Ն.Գ.** գործակիցը **1-ին չափաբաժնի մասով** կկազմի **0.437:**

Քանի որ 2-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկները մնացել են անփոփոխ, ուստի ընտրված մասնակցի կողմից **գնային առաջարկով միավորի գների հանրագումարի** տեսքով առաջարկված գինը՝ Մ.Գ **2-րդ չափաբաժնի** մասով կկազմի **2 000 000** ՀՀ դրամ. պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ծառայության և պահեստամասերի **համար** սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ **Ն.Գ. 2-րդ չափաբաժնի մասով** հավասար է 2 605 000 ՀՀ դրամ: Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծում ներառված բանաձևի **Մ.Գ./Ն.Գ.** գործակիցը 2-րդ չափաբաժնի **մասով** կկազմի **0.767:**

Քանի որ 3-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկները մնացել են անփոփոխ, ուստի ընտրված մասնակցի կողմից գնային առաջարկով միավորի գների հանրագումարի տեսքով առաջարկված գինը՝ Մ.Գ **3-րդ չափաբաժնի** մասով կկազմի **2 000 000** ՀՀ դրամ. պատվիրատուի կողմից ընթացակարգի հրավերով ներկայացված ծառայության և պահեստամասերի համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը՝ Ն.Գ. **3-րդ չափաբաժնի** մասով հավասար է 4 3[illegible]3 000 ՀՀ դրամ: Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծում ներառված բանաձևի **Մ.Գ./Ն.Գ.** գործակիցը 2-րդ չափաբաժնի **մասով** կկազմի 0.463:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Մ.Աղոնց)

4.1 **23.06.2021թ.**-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից ընտրված մասնակիցներ հայտարարել՝

1) «Մոնտալ» ՍՊԸ-ին՝ թիվ 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով,

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:**

(Մ.Աղոնց)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-21-19/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ չեն ներկայացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

(Մ.Առոնց)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

*Ընդունվել է որոշում` կողմ` 4, դեմ` 0:*

| | |
|---|---|
| **Գնահատող (ԳԱՊ)** | Կ. Գրիգորյան |
| **Գնահատող** | Դ. Մարգարյան |
| **Գնահատող** | Գ. Հովսեփյան |
| **Գնահատող** | Ա. Միքայելյան |
| **Գնումները համակարգող** | Մ. Առոնց |